ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

«ՍԵՆԴ ՇԻՆ» ՍՊԸ տնօրեն

Ա. Օհանջանյանից

Հասցե՝ ք. Երևան Աղոնց 21/3

mlmining@mail.ru

Հեռ. 093-60-10-00

Հարգելի պարոն նախարար

«Սենդ Շին» ՍՊ ընկերությունը 11.04.2024թ.-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացել է ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի ավազի հանքավայրի Սենդ Շին տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման թիվ ԵՀԹ-29/396 թույլտվությունը:

Համաձայն Պ-396 պայմանագրի 4.4 կետի 4.4.11 ենթակետի և ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման հիման վրա՝ ընկերությունը պարտավորվել է իրականացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումներ:

2025 թվականին «Սենդ Շին» ՍՊ ընկերությունը դաշտային աշխատանքներ չի իրականացրել, կատարվել է բացառապես 2024 թվականի տվյալների կամերալ վերլուծություն, լաբորատոր փորձարկումներ, կազմվել է հետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվությունը: Շրջակա միջավայրի վրա ազդեցություններ և բնապահպանական կորուստներ չեն դրսևորվել, ինչի հետ կապված մշտադիտարկումներ չեն կատարվել:

«Սենդ Շին» ՍՊԸ

տնօրեն՝ Ա. Օհանջանյան